

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Ք. Գավառ

06.11. 2014 թ.

Նախագահում էր մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը, մասնակցում էին մարզի խորհրդի 92 անդամներից 82-ը:

Մասնակցում էին մարզպետի տեղակալներ Անդրանիկ Հակոբյանը, Կարեն Հակոբյանը մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Սևակ Իլլաթյանը, ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Սամվել Գալստյանը, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետեր, բաժինների վարիչներ, ՀՀ տարածքային կառավարման նախարարության վարչական վերահսկողության բաժնի պետ Հովհաննես Օհանյանը և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

1. Մարզի համայնքների բյուջեների 2014 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների մասին:

/Զեկ. Յուրա. Մուշեղյան - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ/

2. 2014-15 ուսումնական տարում մարզի դպրոցական տարիքի երեխաների հաշվառման և ուսումնական հաստատություններ նրանց ընդգրկման աշխատանքների կազմակերպման մասին:

/Զեկ. Գարիկ Բադալյան - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ/

3. ՀՀ Գեղարքունիքի մարզում 2014 թվականի գյուղատնտեսական աշխատանքների կատարման մասին:

/ Զեկ. Վանիկ Հովհաննիսյան - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ/

4. ՀՀ Գեղարքունիքի մարզի քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության համակարգերում առկա խնդիրների մասին:

/Զեկ. Իվան Ասատրյան - մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ/

5. Այլ հարցեր:

Արտահայտվեցին՝

Սամվել Գալստյանը	- ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
Լյովա Աբրահամյանը	- Շատվան համայնքի ղեկավար
Վուրդյա Խլոյանը	- Վարդենիսի քաղաքապետ
Արծրուն Ղարիբյանը	- Ակունք համայնքի ղեկավար

Հայտարարությունով հանդես եկավ մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Գարիկ Բադալյանը:

Մարզխորհրդի աշխատանքներն ամփոփեց մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը:

1. Մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանին և մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Գարիկ Բադալյանին՝ կատարել ուսումնասիրություն և ճշտել յուրաքանչյուր տարվա մայիս ամսին մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների կողմից հաջորդ ուսումնական տարվա աշակերտների համակազմի վերաբերյալ ներկայացված նախնական տվյալների և մարզի համայնքների ղեկավարների կողմից ներկայացված նոր ուսումնական տարում 1-ին դասարան հաճախող երեխաների անվանական տվյալների տարբերության պատճառները և ուսումնասիրության արդյունքները ներկայացնել մարզպետին:

2. Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Յուրա Մուշեղյանին՝ մարզի այն համայնքներում, որտեղ գրանցվել է համայնքային բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման ցածր ցուցանիշներ կատարել ուսումնասիրություն, ճշտել պատճառները և արդյունքները ներկայացնել մարզպետին:

3. Մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Իվան Ասատրյանին՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության համակարգում առկա խնդիրների մասին» զեկուցագիրը ուղարկել մարզի խոշոր համայնքներին՝ մարզպետարանի հետ համատեղ զեկույցում բարձրացված խնդիրներին լուծում տալու ուղիները գտնելու համար:

4. Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին՝

1) ամենօրյա աշխատանքներ տանել ս/թ նոյեմբերի 30-ի դրությամբ համայնքային բյուջեների սեփական եկամուտների կատարումը 100օ/օ ապահովելու ուղղությամբ.

2) ՀՀ կառավարության 2014 թվականի օգոստոսի 14-ի N 941 – Ն որոշմամբ մարզի համայնքներին անհատույց հատկացված գարու, առվույտի և կորնգանի սերմացուն հատկացնել համայնքների գյուղատնտեսությամբ զբաղվող սոցիալապես անապահով խավին.

3) ուշադրության կենտրոնում պահել մարզի անասնաբուժական կենտրոնների կողմից իրականացվող ծառայությունները և աշխատանքներ տանել անասնապահությունը համայնքներում զարգացնելու ուղղությամբ.

4) ակտիվորեն մասնակցել <<Հայաստան>> համահայկական հիմնադրամի կողմից կազմակերպվող հեռուստամարաթոնին.

5) ուշադրության կենտրոնում պահել համայնքների գյուղապետարանների աշխատանքային կարգապահական կանոնների պահպանումը:

ՄԱՐԶՊԵՏ՝

 Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ